



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՊԼԱՆ**

**2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐ**

(2014-2016 թթ.)

ԵՐԵՎԱՆ 2014

Ռազմավարական պլանը մշակվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում 2013 թ. սեպտեմբերի 5-ին «Կրթական ծրագրերի» ԾԻԳ-ի և ՀԱԱՀ հիմնադրամի միջև դրամաշնորհային պայմանագրով իրականացվող «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ծրագրի գործողությունների պլանի համաձայն ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից:

Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից

07.02.2014 թ. (արձանագրություն N° 6)

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Օգտագործված հապավումներ	4
1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ	5
ՆԱԽԱԲԱՆ	5
Ագրոպարենային համակարգի ուսումնասիրտադրական կենտրոնի առաքելությունը և ռազմավարական խնդիրները	9
Համալսարանի շրջանավարտների աշխատանքային և մասնագիտական առաջխաղացմանն ու գիտելիքների կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացում:	10
ԱՀՈՒԱԿ-ի ստեղծումից ակնկալվող արդյունքներ	12
ԱՀՈՒԱԿ-ի զարգացման ռազմավարության ծրագրերը, նպատակները, խնդիրները և դրանց իրագործման ուղղությունները	14
2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	19

Օգտագործված հասպավումներ

ՆՄՀ - Նորարարությունների մրցակցային հիմնադրամ

ԱՀՈՒԱԿ - Ազրոպարենային համակարգի ուսումնասիրտադրական կենտրոն

ՄՈՒՀ – մասնագիտական ուսումնական հաստատություն

ԳԽ – գիտական խորհուրդ

ՄԿԾ – Մասնագիտության կրթական ծրագիր

ՀԱԱՀ – Հայաստանի ազգային ազրարային համալսարան

ՈՒՄԿ – Ուսումնամեթոդական կենտրոն

ՈԱ – Որակի ապահովման

ԿԲՌՊՈՎԻ – կրթության բարելավման, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման, ինքնավերլուծության

1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Ազրոպարենային համակարգը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը: Համակարգում ստեղծվում է երկրի համախառն ներքին արտադրանքի մինչև քառասուն տոկոսը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումներն առաջինը սկսվեցին հենց ազրոպարենային համակարգի առանցքային օղակից՝ գյուղատնտեսությունից: Այս ոլորտի կայուն զարգացման համար կարևոր հիմնախնդիրներից մեկը նոր պայմաններում համապատասխան որակավորում ունեցող մասնագետների պատրաստման գործընթացի բարելավումն է: Ուստի և գյուղատնտեսության զարգացման քաղաքականության գիտականորեն հիմնավորված ռազմավարության մեջ պահանջարկված կադրերի պատրաստման դերն ու նշանակությունն ակներև են ու ազրոպարենային համակարգի բարձրագույն և միջին մասնագիտական կրթությունը, գիտությունը և խորհրդատվությունը կարևոր են Հայաստանի ներկայի և ապագայի համար և մեծ ներդրում ունեն կայուն տնտեսական աճի և աղքատության հաղթահարման գործում: Հայաստանի ազգային ազրարային համալսարանը (ՀԱԱՀ) հանրապետության միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որը բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն է իրականացնում բուսաբուծության, անասնաբուծության և անասնաբուժության, պարենամթերքի տեխնոլոգիաների, գյուղատնտեսական մեքենաների և արտադրական պրոցեսների մեքենայացման ոլորտներում: ՀԱԱՀ կրթության բնագավառում հանրապետության առաջնակարգ բուհերից է և միակ բուհն է, որը առաջարկում է չորս փուլից բաղկացած կրթություն գյուղատնտեսության և սննդի բնագավառներում (միջին մասնագիտական, բակալավրային, մագիստրոսական, հետբուհական):

ՀԱԱՀ հավատարմագրման նպատակով 2012 թ.-ին Հանալսարանի ինստիտուցիոնալ ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման, համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների շրջանում իրականացված

հարցումների արդյունքում վեր հանված կարիքների վերլուծության ժամանակ համալսարանում արձանագրվել և բացահայտվել են մի շարք առկա **հիմնախնդիրներ**, որոնցից ներկայացվող ծրագրի հետ ուղղակիորեն առնչվում են հետևյալ երկուսը.

- անհամապատասխանություն Համալսարանի, նրա մասնաճյուղերի ու քոլեջների շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության և աշխատաշուկայի պահանջարկի միջև, և
- պրակտիկ գիտելիքների դասավանդման համար անհրաժեշտ առկա նյութատեխնիկական բազայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը, իսկ որոշ դեպքերում նաև դրանց լրիվ բացակայությունը (հիշենք, որ խորհրդային տարիներին ՀՀ-ն ագրարային համակարգում շահագործվում էր գլխավորապես խորհրդային արտադրության գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ, որոնք ամբողջությամբ ներմուծվում էին Խորհրդային Միության տարբեր հանրապետություններից: Հայաստանում անկախության հռչակմանը հաջորդած տրանսպորտային և տնտեսական ճգնաժամը, ինչպես նաև նոր տնտեսական հարաբերությունները չէին նպաստում մեքենատրակտորային պարկի թարմացմանը: Որպես հետևանք, գյուղատնտեսության մեջ, մինչև հիմա էլ օգտագործվում են մեծամասամբ դեռևս խորհրդային տարիներին արտադրված գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ, որոնք վաղուց անցել են ֆիզիկական և բարոյական մաշվածության թույլատրելի սահմանները):

Օրինակ, այսօր գյուղատնտեսության մեքենայացման ոլորտի միջին և բարձրագույն մասնագետների պատրաստման որակը դեռևս հեռու է բավարար լինելուց: Բավական է նշել, որ իրենց ուսումնառության ընթացքում ուսանողները մասնագիտական գիտելիքները ձեռք են բերում խորհրդային արտադրության հին գյուղատնտեսական տեխնիկայի նմուշների օրինակների վրա: Արդյունքում, ուսումն ավարտելուց հետո, շրջանավարտները լուրջ դժվարություններ են ունենում պրակտիկայում, երբ աշխատանքի ընթացքում գյուղատնտեսական արտադրության տարբեր ոլորտներում հանդիպում են ժամանակակից նորագույն գյուղատնտեսական տեխնիկայի՝

տրակտորների, կոմբայնների և այլ գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների, որոնք տարբեր երկրների դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում անհատույց տրվել են ՀՀ Գյուղատնտեսության նախարարությանը (վերիջին 10 տարիներին, տարբեր վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ՀՀ Գյուղատնտեսության նախարարությանը Չինաստանի, Հնդկաստանի և Ճապոնիայի կառավարությունների կողմից տրամադրվեցին 31,3 մլն ԱՄՆ դոլլարի նորագույն ագրարային տեխնիկա): Ստացվում է, որ համալսարանը կամ քոլեջն ավարտելուց անմիջապես հետո առաջին պլան է գալիս այդ մասնագետների վերապատրաստման ու վերաորակավորման հարցը: Դրա հետ մեկտեղ ՀՀ-ում այսօր շատ գյուղատնտեսական ձեռնարկություններ ու ֆերմերային տնտեսություններ կիրառում են ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկա, որի օգտագործման ու ճիշտ շահագործման համար նույնիսկ երկարատև աշխատանքային փորձ ունեցող մեծ թվով ֆերմերներ ու ինժեներներ նույնպես կարիք ունեն վերաորակավորման, իսկ գյուղատնտեսական կրթություն չունեցող ֆերմերները՝ նախնական ուսուցման:

Այսպիսով, առ այսօր համալսարանում, նրա մասնաճյուղերում և քոլեջներում, ինչու ոչ նաև հանրապետության գյուղատնտեսական ոլորտի մյուս քոլեջներում դեռևս առկա հիմնախնդիրներից է հանդիսանում պրակտիկ գիտելիքների դասավանդման համար անհրաժեշտ առկա գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ֆիզիկական ու բարոյական մաշվածությունները, իսկ որոշ քոլեջներում նաև դրանց բացակայությունը: Դրա պատճառով էլ դեռևս վերացված չէ անհամապատասխանությունը նշված ՄՈՒՀ-երի շրջանավարտների ձեռք բերված գիտելիքների և աշխատաշուկայի պահանջարկի միջև:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հաշվի առնել, որ նորագույն տեխնիկայի ու տեխնոլոգիաների ներդրումը զգալիորեն արտահայտվում են աշխատանքի շուկայի կառուցվածքում, բնակչության զբաղվածության ձևերում, կրթության և ուսուցման բովանդակության մեջ: Ընդ որում, ի տարբերություն մինչ 80-ականների սկզբի ժամանակաշրջանին, այսօր այս կամ այն մասնագիտության գծով կրթության արդյունքում ստացված գիտելիքներն ու կարողությունները մի քանի տարի հետո արդեն հնանում են: Առավել ցայտուն դա արտահայտվում է կրթական համակարգում

(մասնագիտական և բարձրագույն): Այդ պատճառով էլ «ՀՀ Կայուն Զարգացման Ծրագրից» (ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշում) և «Հայաստանի Հանրապետության քոլեջների կրթության զարգացման հայեցակարգից» բխում է ողջ կյանքի ընթացքում ուսուցման կոնցեպցիայի կարևորությունը էկոնոմիկայի բոլոր ճյուղերում, այդ թվում նաև ագրարային բնագավառում: Այսօր աննկարագրելի տեմպերով տեղի են ունենում փոփոխություններ՝ ինչպես հասարակական կյանքում, այնպես էլ գիտության մեջ, տեխնիկայում ու տեխնոլոգիաներում: Այդ փոփոխությունները պրակտիկորեն անդրադառնում են նաև անցումային էկոնոմիկայով երկրների վրա՝ ինչպիսին Հայաստանն է, որտեղ աշխարհում ընթացող գլոբալ պրոցեսներին զուգընթաց գումարվում են նաև սեփական դժվարությունները՝ կապված տնտեսավարման ձևերի ու մեթոդների վերանայման, նոր տեխնոլոգիաների ներդրման հետ և այլն:

Միաժամանակ էապես փոխվել են ագրարային տեխնիկայի և տեխնոլոգիաների շահագործման, ինամքի, սպասարկման, դիագնոստիկայի ու նորոգման աշխատանքների ոլորտի աշխատողների մասնագիտական գիտելիքների և ունակությունների, այսինքն նրանց որակավորման նկատմամբ ներկայացվող պահանջները: Նախկին տարիներին կրթություն ստացած մասնագետների մի ամբողջ բանակ գրկվեց աշխատանքից ոչ միայն աշխատատեղերի կրճատման արդյունքում, այլև աշխատանքի շուկայի նոր պահանջներին դրանց որակավորման մակարդակի անհամապատասխանության պատճառով: Այդ առումով էլ այսօր ՀՀ Կառավարության կողմից առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ագրարային ոլորտի սովորողների պրակտիկ գիտելիքների և ունակությունների հետագա զարգացմանն ու խորացմանը, որի լուծումն ուղղված է հետևյալ հիմնական թիրախների հաղթահարմանը.

- ա) պարենային արտադրության աճի ապահովում,
- բ) սակավապահով ֆերմերային տնտեսությունների վիճակի բարելավում,
- գ) սոցիալական խնդիրների լարվածության մեղմում՝ կապված գործազրկության թեթևացման, նոր աշխատատեղերի ստեղծման հետ,
- դ) բարեկեցության ապահովում և աղքատության հաղթահարում,

ե) մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի արդիականացում՝ միտված աշխատաշուկայի պահանջարկի բավարարմանը:

Նշված թիրախների հաղթահարման, ագրոպարենային ոլորտի կրթության և խորհրդատվության, ուսումնափորձնական և գիտաարտադրական բազայի զարգացման նպատակներով Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում 2013 թ. սեպտեմբերի 5-ին «Կրթական ծրագրերի» ԾԻԳ-ի և ՀԱԱՀ հիմնադրամի միջև դրամաշնորհային պայմանագրով իրականացվող «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ծրագրի գործողությունների պլանի համաձայն ՀԱԱՀ-ի կազմում ստեղծվել է «Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոն» (ԱՀՈՒԱԿ):

Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի առաքելությունը և ռազմավարական խնդիրները

Կենտրոնի *առաքելությունն է* տարածաշրջանում դառնալ ագրոպարենային համակարգի օրինակելի ձեռնարկություն, որը ծառայություններ կմատուցի գյուղատնտեսության վարման, տեխնիկայի շահագործման, կենսաէներգիայի և ագրարային ոլորտի այլ բնագավառներում կրթական, ուսումնաարտադրական, խորհրդատվական և տեղեկատվական ուղղություններով:

Նշված առաքելությանը հասնելու համար ԱՀՈՒԱԿ-ը պետք է իրականացնի հետևյալ *ռազմավարական խնդիրները*.

- Ագրարային ոլորտի կրթական համակարգի (մասնագիտական և բարձրագույն) բարելավում,
- Լրացուցիչ և շարունակական մասնագիտական ուսուցման համակարգի զարգացում և կատարելագործում
- Ագրարային խորհրդատվության և տեղեկատվության համակարգի ստեղծում և զարգացում

- Գյուղական երիտասարդության համար ագրարային կրթական համակարգի մատչելիությանն ուղղված միջոցառումների իրականացում մասնագիտական կողմնորոշման նպատակով:

Համալսարանի շրջանավարտների աշխատանքային և մասնագիտական առաջխաղացմանն ու գիտելիքների կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Այսօր Հայաստանի Հանրապետության ագրարային կրթության (միջին մասնագիտական և բարձրագույն) ոլորտում առաջիկա զարգացումը միտված է հետևյալ փոխապայմանավորող և փոխլրացնող գլխավոր նպատակների իրականացմանը.

- ապահովել կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճ,
- ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման արդյունավետության բարձրացում,
- ագրարային նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիաների մշտական փոփոխությունների նկատմամբ կրթական համակարգի ճկունության ապահովում,
- տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, նորագույն ագրարային տեխնիկայի շահագործման, խնամքի, սպասարկման, ախտորոշման և նորոգման հմտություններին տիրապետող որակյալ մասնագետների պատրաստում:
- դասավանդող անձնակազմի պարբերական վերապատրաստում և վերաորակավորում:

Վերոհիշյալի հետ մեկտեղ և «ՀՀ Կայուն Զարգացման Ծրագրի» ու «Քուլեջների կրթության մասին» ՀՀ Օրենքին համահունչ **ԱՀՈՒԱԿ**-ը կոչված է մի կողմից լրացնելու գյուղատնտեսության մեքենայացման բնագավառում մի շարք մասնագիտությունների գծով կադրերի պակասը և մյուս կողմից ապահովելու

ագրարային ոլորտի ՄՌԻՀ-երի պատրաստած կադրերի մասնագիտական հմտությունների համապատասխանելիությունը աշխատաշուկայի պահանջարկին:

Հայաստանի Հանրապետությունում կրթական ոլորտի զարգացման քաղաքականությունն այսօր ուղղված է այն բանին, որ բարեփոխումների արդյունքները նշանակալի ազդեցություն ունենան երկրում տնտեսական աճի, աղքատության կրճատման, անհավասարության մեղմման, էկոլոգիական անվտանգության ապահովման և մարդկային զարգացման գործընթացների վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

ԱՀՌԻԱԿ-ի ստեղծումը համահունչ է նաև ՀԱԱՀ 2012-2017 թթ. Զարգացման ռազմավարական պլանի խորհրդատվական գործունեության նպատակի թիվ 10 խնդրի հետ (էջ 53) «... Համալսարանի ուսումնափորձական տնտեսությունների բազայի վրա խորհրդատվության գործնական հմտությունների ուսուցման, ստացված տեսական գիտելիքների կիրառման և արտադրության մեջ նորագույն տեխնոլոգիաների ներդրման գիտագործնական համակարգի զարգացում, խորհրդատվության իրականացման արդյունքների, տնտեսական, էկոլոգիական և սոցիալական արդյունավետության գնահատման չափանիշների ու մեխանիզմների մշակում...» և ՀԱԱՀ նյութատեխնիկական բազայի զարգացման գլխավոր ուղղությունների հետ (էջ 57) «... Ագրարային կրթության գործնական հմտությունների ապահովման, ձեռք բերած տեսական գիտելիքների կիրառման և արտադրության մեջ նորագույն տեխնոլոգիաների ներդրման նպատակով անհրաժեշտ է իրականացնել գիտակրթական լաբորատոր բազայի նորացում և արդիականացում՝ այդ նպատակին ծառայեցնելով նաև հանրապետության ագրոպարենային համակարգը սպասարկող ձեռնարկությունների ու կազմկերպությունների, ինչպես նաև համալսարանի Ոսկեհատի և Բալահովիտի ուսումնափորձական տնտեսությունների հնարավորությունները...»:

Այս կենտրոնի նպատակային խմբերը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, նրա մասնաճյուղերի և գյուղատնտեսական քոլեջների նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի ուսանողներն են, դասախոսները, Հայաստանի և տարածաշրջանի երկրների

Ֆերմերները, գյուղատնտեսության արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվողները, մարզային, համայնքային, պետական և մասնավոր խորհրդատվական մարմինների մասնագետները, ոլորտով զբաղվող հասարակական կազմակերպությունները:

ԱՀՈՒԱԿ-ի ստեղծման առաջնային փուլի շրջանակներում նպատակահարմար է ձեռք բերել գյուղատնտեսական մի շարք մեքենաներ և սարքավորումներ:


ԱՀՈՒԱԿ-ի ստեղծումից ակնկալվող արդյունքներ

- ագրոպարենային համակարգի, դրա մեքենայացման ոլորտում կրթության որակի, ուսանողների գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի մակարդակի բարձրացում,
- Համալսարանի մեքենատրակտորային պարկի ժամանակակից չափանիշներով կահավորում, տարբերակված հողօգտագործման և երկրագործության վարման պայմաններում գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման վերաբերյալ խորհրդատվության արդյունավետության ապահովում:
- Հանրապետության ագրոարդյունաբերական համալիրի համար բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստում ու վերապատրաստում,
- համալսարանի ու նրա շրջանավարտների մրցունակության բարձրացում՝ կրթական ծառայությունների և աշխատանքի շուկաներում,
- ագրարային ոլորտի սուբյեկտների արտադրատնտեսական գործունեության բարելավում,
- Հանրապետության և տարածարջանի գյուղատնտեսությունը սպասարկող, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բնագավառների գործարար հանրության, ինչպես նաև պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխշահավետ համագործակցության հիմքի վրա համալսարանի ներդրումային գրավչության բարձրացում,

- Լրացուցիչ ու շարունակական մասնագիտական կրթության պահանջարկի մոնիթորինգի անցկացում և գնահատում,
- պահանջարկված դասընթացների ուսումնական գործընթացի խմբային և անհատական ծրագրերի մշակում և դրանց ուսումնամեթոդական ապահովում:
- Համալսարանի մասնաճյուղերի և տարածաշրջաններում գյուղատնտեսական պետական քոլեջների ցանցի ընդգրկմամբ լրացուցիչ ու շարունակական մասնագիտական կրթության տնտեսապես շահավետ ներհամալսարանական համակարգի ձևավորում ու զարգացում:
- Գյուղատնտեսական ձեռնարկություններին, ֆերմերային տնտեսություններին, ձեռներեցներին և գյուղական բնակչությանը խորհրդատվական ու մեթոդական օժանդակություն ցուցաբերող օղակների գործունեության կատարելագործում:
- Համալսարանի ուսումնափորձական տնտեսությունների բազայի վրա խորհրդատվության գործնական հմտությունների ուսուցման, ստացված տեսական գիտելիքների կիրառման և արտադրության մեջ նորագույն տեխնոլոգիաների ներդրման գիտագործնական համակարգի զարգացում:
- Ուսումնափորձական տնտեսությունների բազայի վրա խաղողագործության, պտղաբուծության, բանջարաբուծության, գինեգործության, կերարտադրության, սերմնաբուծության, անասնաբուծության և անասնաբուծության, հողաբարելավման, հողաշինարարության և հողային կադաստրի, անասնաբուծական և բուսաբուծական մթերքների վերամշակման ոլորտներում խորհրդատվության մեթոդոլոգիայի կատարելագործման համապարփակ հնարավորությունների ստեղծում:
- գործատուների և հասարակության վստահության մակարդակի բարձրացում
- հանրապետությունում և տարածաշրջանում կրթության հասարակական արժեքի բարձրացում:

Բացի այդ, ԱՀՈՒԱԿ-ի առկայությունից կշահեն նաև գյուղական շրջանների բնակչությունը: Նախագծի շրջանակներում Հայաստան ներմուծված գյուղատնտեսական սարքավորումները ուսուցմանը զուգընթաց կօգտագործվեն նաև շրջակա ֆերմերային տնտեսություններին պայմանագրային հիմունքներով ծառայությունների մատուցման աշխատանքներում՝ զուգակցելով ուսանողների

պրակտիկ փորձի ձեռք բերման իրականացումը: Արդյունքում ներմուծված գյուղատնտեսական տեխնիկայի կողմից սպասարկվող տարածքը կընդլայնվի 30 - 35 հազար հեկտարով: Հաշվի առնելով, որ հողի սեփականաշնորհման արդյունքում մեկ անձին բաժին ընկնող հողատարածքը համարժեք է մոտ 1,3 հա-ի, ապա անուղղակի ձևով նախագծի իրականացումից կշահեն նաև գյուղական շրջաններում ապրող 45000 - 50000 մարդ: Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի փոխհամագործակցության ուղղությունները և թիրախային խմբերը բերված են նկար 1-ում:



Նկար 1. ԱՀՈՒԱԿ-ի փոխհամագործակցության ուղղությունները և թիրախային խմբերը

ԱՀՈՒԱԿ-ի զարգացման ռազմավարության ծրագրերը, նպատակները, խնդիրները և դրանց իրագործման ուղղությունները

Ռազմավարական նպատակ 1. *Ագրարային ոլորտի կրթական համակարգի (մասնագիտական և բարձրագույն) բարելավում:*

Հիմնական ռազմավարական խնդիրները.

- ՄԿԾ-երի և ուսումնական պլանների մշտադիտարկում և վերանայում,

- Դասավանդման տեսական նյութերի արդիականացում,
- Ուսումնառողների գործնական հմտությունների զարգացում,
- Ձևավորել ուսումնական խորհրդատուների ինստիտուտ առանձին մասնագիտությունների համար՝ ներառելով համալսարանի առավել փորձառու դասախոսներին:

Ակնկալվող արդյունքներ

- Վերջնարդյունքներին ուղղված ՄԿԾ-երի ձևավորում,
- Բարելավված ՄԿԾ-եր,
- Վերանայված դասավանդման և ուսումնառության նյութեր,
- Մշակված նոր դասագրքեր, մեթոդական ցուցումներ,
- Վերապատրաստված պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որոնք կարողանում են մշակել և ներդնել էլեկտրոնային դասընթացներ,
- Գործնական հմտություններ և կարողություններ ձևավորած ուսանողներ,
- Նորարարական տեխնոլոգիաներին տիրապետող պրոֆեսորադասախոսական անձնակազմ,
- Իրագեկված և պատրաստված խորհրդատուներ:

Ռազմավարական նպատակ 2. Լրացուցիչ և շարունակական մասնագիտական ուսուցման համակարգի զարգացում և կատարելագործում

Հիմնական ռազմավարական խնդիրները.

- Լրացուցիչ ու շարունակական մասնագիտական կրթության պահանջարկի մոնիթորինգի անցկացում և գնահատում, դասընթացների ուսումնական գործընթացի խմբային և անհատական ծրագրերի մշակում և ներդրում:
- Լրացուցիչ ու շարունակական մասնագիտական կրթության ցանցի հետազարդում:
- Ազրոպարենային ոլորտի ցկյանս կրթությանը միտված միջոցառումների պլանավորում և կազմակերպում

- Խորհրդատվական ու մեթոդական գործունեության կատարելագործում:

Ակնկալվող արդյունքներ

- Իրականացված հարցումներ և ֆոկուսխմբեր,
- Լրացուցիչ և շարունակակա կրթական ծրագիր մշակելու համար հիմքեր (գնահատված պահանջարկ),
- Մշակված և ներդրված խմբային և անհատական դասընթացներ,
- Ընդլայնված ցանց մասնագիտական լրացուցիչ և շարունակական կրթության կազմակերպման համար,
- Հեռահար ուսուցման իրականացում,
- Ցկյանս կրթության ներդրված համակարգ,
- Ցկյանս կրթության շրջանավարտներ,
- Մեթոդական ուղեցույցեր գյուղատնտեսական ձեռնարկությունների, ֆերմերային տնտեսությունների, ձեռներեցների և գյուղական բնակչության համար:

Ռազմավարական նպատակ 3. Ագրարային խորհրդատվության և տեղեկատվության համակարգի ստեղծում և զարգացում

Հիմնական ռազմավարական խնդիրները.

- Ագրարային խորհրդատվական ծառայությունների մատուցում և հետադարձ կապի ապահովում,
- Խորհրդատվական և տեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում,
- Խորհրդատվական ծառայությունների կազմակերպման մեթոդների կատարելագործում,
- Համալսարանի մարզերի միջին մասնագիտական մասնաճյուղերի և Համալսարանի հետ համագործակցող այլ միջին մասնագիտական հաստատությունների, գյուղական դպրոցների հետ համագործակցության ընդլայնում և հատուկ կրթական ծրագրերի իրականացում:

Ակնկալվող արդյունքներ

- Մշակված և իրականացված խորհրդատվություններ գյուղացիական, ֆերմերային, վերամշակող տնտեսությունների և ձեռնարկությունների համար,
- Խորհրդատվության մասնակիցների կողմից տրված հետադարձ կապը կենտրոնին,
- ԱՌԻ-ՀԱԿ-ի կայքը,
- Վեբ-ուսուցման համակարգ,
- Տեղեկատվական և վերապատրաստման նյութերի առկայությունը կենտրոնի կայքում,
- Խորհրդատվական առցանց համակարգ՝ ժամանակակից խորհրդատվական մեթոդների կիրառմամբ

Ռազմավարական նպատակ 4. *Գյուղական երիտասարդության համար ագրարային կրթական համակարգի մատչելիությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով*

Հիմնական ռազմավարական խնդիրները.

- Համալսարանի մարզերի միջին մասնագիտական մասնաճյուղերի և Համալսարանի հետ համագործակցող այլ միջին մասնագիտական հաստատությունների, գյուղական դպրոցների հետ համագործակցության ընդլայնում և հատուկ կրթական ծրագրերի իրականացում:

Ակնկալվող արդյունքներ

- Մասնագիտական կողմնորոշման իրականացում,
- Համալսարանի միջին մասնագիտական հաստատությունների, ինչպես նաև համագործակցող այլ միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորում:

Ռազմավարական նպատակ 5. Գեներոնի միջազգային կապերի ստեղծում եվրոպական համալսարանների նմանատիպ կառույցների հետ

Հիմնական ռազմավարական խնդիրները.

- Միջազգային փորձի հիման վրա գլոբալատնտեսական հումքի վերամշակման ու պահպանման նոր տեխնոլոգիաների ուսուցման, կրթության և խորհրդատվության համապարփակ համակարգի ստեղծում:

Ակնկալվող արդյունքներ

- Գլոբալատնտեսական հումքի վերամշակման ու պահպանման նոր տեխնոլոգիաների ուսուցման ներդրում և կիրառում,
- Միջազգային չափանիշներին համապատասխան կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոպարենային համակարգի ուսումնասիրտադրական կենտրոնի

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ռազմավարական նպատակը	Ռազմավարական խնդիրները	Անհրաժեշտ գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (եղել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական, ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
Ագրարային ոլորտի կրթական համակարգի (մասնագիտական և բարձրագույն) բարելավում:	ՄԿԾ-երի և ուսումնական պլանների մշտադիտարկում և վերանայում	<ul style="list-style-type: none"> Ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանն ուղղված կրթական ծրագրերի մշակում, ՄԿԾ-երի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման իրականացում 	2014-2015 ուս. տարի 1-ին կիս.	ՀԱԱՀ ԿԲՌՊՈՎԻ բաժին, Ս. Դավեյան ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն	ԱՀՈՒԱԿ-ի աշխատակազմ	Վերջնարդյունքներին ուղղված ՄԿԾ-երի ձևավորում, Բարելավված ՄԿԾ-եր
	Դասավանդման տեսական նյութերի արդիականացում	Նորագույն ագրարային տեխնիկայի շահագործման, խնամքի, սպասարկման, արատորոշման և նորոգման ժամանակակից մեթոդների ու տեխնիկական միջոցների կիրառման անհրաժեշտությամբ պայմանավորված	<ul style="list-style-type: none"> Դասավանդման և ուսումնառության նյութերի վե- 	2014-2015 ուս. տարի 2015-2016 ուս. տարի	ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն, ՀԱԱՀ «Գյուղ. Մեքենաների» և «Գյուղ. տեխնիկայի շահագործման» ամբիոններ Ա. Եսոյան	ՀԱԱՀ ֆակուլտետներ, կենտրոններ, ՀԱԱՀ տպարան

Ռազմավարական նպատակը	Ռազմավարական խնդիրները	Անհրաժեշտ գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական, ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
		<p>րանայում,</p> <ul style="list-style-type: none"> Նոր դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և մեթոդական նյութերի մշակում, Ձևավորել անհրաժեշտ կադրային, տեխնոլոգիական և մեթոդական ռեսուրսներ՝ էլեկտրոնային եղանակով ուսուցման դասընթացների մշակման և ներդրման համար: 		Ա. Մարգարյան		Վերապատրաստված պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որոնք կարողանում են մշակել և ներդնել էլեկտրոնային դասընթացներ
	Ուսումնասողների գործնական հմտությունների զարգացում	<p>Նորագույն ագրարային տեխնիկայի օրինակների վրա դրանց շահագործման իրական պայմաններում.</p> <ul style="list-style-type: none"> Գործնական պարապմունքների անցկացում, Արտադրական պրակտիկայի կազմակերպում: 	2014-2015 ուս. տարի 2015-2016 ուս. տարի	ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն, ՀԱԱՀ «Գյուղ. Մեքենաների» և «Գյուղ. տեխնիկայի շահագործման» ամբիոններ Ա. Եսոյան Ա. Մարգարյան	ՀԱԱՀ ֆակուլտետներ, կենտրոններ, ՀԱԱՀ ՈՒՄԿ	Գործնական հմտություններ և կարողություններ ձևավորած ուսանողներ
	Ձևավորել ուսումնական խորհրդատուների ինստիտուտ ա-	<ul style="list-style-type: none"> Դասախոսների վերապատրաստում նորագույն 	2014-2015 ուս. տարի 2-	ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն,	ԱՀՈՒԱԿ-ի աշխատա-	Նորարարական տեխնո-

Ռազմավարական նպատակը	Ռազմավարական խնդիրները	Անհրաժեշտ գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (եղև պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական, ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
	ռանձին մասնագիտությունների համար՝ ներառելով համալսարանի առավել փորձառու դասախոսներին	<p>ագրարային տեխնիկայի օրինակների վրա</p> <ul style="list-style-type: none"> Կանոնակարգելով ուսումնական խորհրդատուների պարտականություններն ու իրավունքները: 	ըդ կիս.	ՀԱԱՀ «Գյուղ. Մեքենաների» և «Գյուղ. տեխնիկայի շահագործման» ամբիոններ Ա. Եսոյան Ա. Մարգարյան	կազմ	լոգիաներին տիրապետող պրոֆեսորադասախոսական անձնակազմ, իրազեկված և պատրաստված խորհրդատուներ
Լրացուցիչ և շարունակական մասնագիտական ուսուցման համակարգի զարգացում և կատարելագործում	Լրացուցիչ ու շարունակական մասնագիտական կրթության պահանջարկի մոնիթորինգի անցկացում և գնահատում, դասընթացների ուսումնական գործընթացի խմբային և անհատական ծրագրերի մշակում և ներդրում	<ul style="list-style-type: none"> Հարցումների, ֆոկուս խմբերի անցկացում ֆերմերային տնտեսությունների, ՀԱԱՀ-ի շրջանավարտների և այլ շահառուների շրջանում Հարցումների և ֆոկուս խմբերի հիման վրա կարիքների վերհանում Բացահայտված կարիքների հիման վրա դասընթացների ուսումնական գործընթացի խմբային և անհատական ծրագրերի մշա- 	2014-2015 ուս. տարի	ՀԱԱՀ ԿԲՌՊՈՎԻ բաժին, Ս. Դավեյան ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն	ՀԱԱՀ ՈՒՄԿ, ԱՀՈՒԱԿ-ի աշխատակազմ, համապատասխան մասնագիտության ոլորտի կուրատորներ	Իրականացված հարցումներ և ֆոկուս խմբեր, Լրացուցիչ և շարունակական կրթական ծրագիր մշակելու համար հիմքեր (գնահատված պահանջարկ) Մշակված և ներդրված խմբային և անհատական

Ռազմավարական նպատակը	Ռազմավարական խնդիրները	Անհրաժեշտ գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական, ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
	Լրացուցիչ ու շարունակական մասնագիտական կրթության ցանցի հետագա ընդլայնում	<ul style="list-style-type: none"> • Համալսարանի մասնաճյուղերի և մարզերում գյուղատնտեսական պետական քոլեջներին մասնակից դարձնել լրացուցիչ և շարունակական կրթության գործընթացներին • Հեռահար ուսուցման տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում 	2015-2016 ուս. տարի	ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն ՀԱԱՀ ՏՏ և ԻԾ կենտրոն Վ. Մելքոնյան	ԱՀՈՒԱԿ-ի աշխատակազմ	դասընթացներ Ընդլայնված ցանց մասնագիտական լրացուցիչ և շարունակական կրթության կազմակերպման համար, Հեռահար ուսուցման իրականացում
	Ագրոպարենային ոլորտի ցկյանս կրթությանը միտված միջոցառումների պլանավորում և կազմակերպում	<ul style="list-style-type: none"> • Վերապատրաստման դասընթացների և աշխատառողովների մշակում և իրականացում 	2015-2016 ուս. տարի 1-ին կիս.	ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն ՀԱԱՀ ՄԼՇԿՎՄՈՒԳՀ բաժին Հ. Մարգարյան	ՀԱԱՀ ՄԼՇԿՎՄՈՒԳՀ բաժին	Ցկյանս կրթության ներդրված համակարգ, Ցկյանս կրթության շրջանավարտներ
	Խորհրդատվական ու մեթոդական գործունեության կատարում	Գյուղատնտեսական ձեռնարկությունների, ֆերմերային	2015-2016 ուս. տարի 2-	ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն	ԱՀՈՒԱԿ-ի աշխատակազմ	Մեթոդական ուղեցույցներ

Ռազմավարական նպատակը	Ռազմավարական խնդիրները	Անհրաժեշտ գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական, ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
	ընթացործում	տնտեսությունների, ձեռներեցների և գյուղական բնակչության համար խորհրդատվական ու մեթոդական նյութերի մշակում	ընդ կիս.	ՀԱԱՀ ՄԼՇԿՎՄՈՒԳՀ բաժին Հ. Սարգսյան	կազմ, ՀԱԱՀ ՄԼՇԿՎՄՈ ԻԳՀ բաժին	գյուղատնտեսական ձեռնարկությունների, ֆերմերային տնտեսությունների, ձեռներեցների և գյուղական բնակչության համար,
Ագրարային խորհրդատվության և տեղեկատվության համակարգի ստեղծում և զարգացում	Ագրարային խորհրդատվական ծառայությունների մատուցում և հետադարձ կապի ապահովում	Գյուղացիական, ֆերմերային, վերամշակող տնտեսությունների և ձեռնարկությունների <ul style="list-style-type: none"> • Կարիքների ուսումնասիրություն, • Խորհրդատվական ծառայությունների մատուցում, • Օպերատիվ խորհրդատրվական համակարգի մշակում և ներդնում: 	2015-2016 ուս. տարի	ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն ՀԱԱՀ ՄԼՇԿՎՄՈՒԳՀ բաժին Հ. Սարգսյան	ԱՀՈՒԱԿ-ի աշխատակազմ, ՀԱԱՀ ՄԼՇԿՎՄՈ ԻԳՀ բաժին	Մշակված և իրականացված խորհրդատվություններ գյուղացիական, ֆերմերային, վերամշակող տնտեսությունների և ձեռնարկությունների համար, Խորհրդատվության մասնակիցների

Ռազմավարական նպատակը	Ռազմավարական խնդիրները	Անհրաժեշտ գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական, ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
						կողմից տրրված հետադարձ կապը կենտրոնին
	Խորհրդատվական և տեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում	<ul style="list-style-type: none"> • ԱՀՈՒԱԿ-ի կայքի ստեղծում • Կայքում ստեղծել Վեբ-ուսուցման համակարգ՝ կենտրոնի կայքը համալրելով էլեկտրոնային ուսուցման ուսումնամեթոդական նյութերով: 	2014-2015 ուս. տարի	ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն ՀԱԱՀ ՏՏ և ԻԾ կենտրոն Վ. Մելքոնյան	ԱՀՈՒԱԿ-ի աշխատակազմ, ՀԱԱՀ ՏՏ և ԻԾ կենտրոն	ԱՈՒՀԱԿ-ի կայքը Վեբ-ուսուցման համակարգ Տեղեկատվական և վերապատրաստման նյութերի առկայությունը կենտրոնի կայքում
	Խորհրդատվական ծառայությունների կազմակերպման մեթոդների կատարելագործում	<ul style="list-style-type: none"> • Կայքում ստեղծել հնարավորություն՝ առցանց խորհրդատվություն և գնահատում իրականացնելու ֆերմերային, գյուղացիական և վերամշակող տնտեսությունների ու ձեռնարկությունների և համալ- 				Խորհրդատրվական առցանց համակարգ՝ ժամանակակից խորհրդատրվական մեթոդների

Ռազմավարական նպատակը	Ռազմավարական խնդիրները	Անհրաժեշտ գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական, ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
		<p>սարանի բոլոր ուսանողների համար:</p> <ul style="list-style-type: none"> Խորհրդատվության իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմների մշակում 				կիրառմամբ
Գյուղական երիտասարդության համար ագրարային կրթական համակարգի մատչելիությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով	Համալսարանի մարզերի միջին մասնագիտական մասնաճյուղերի և Համալսարանի հետ համագործակցող այլ միջին մասնագիտական հաստատությունների, գյուղական դպրոցների հետ համագործակցության ընդլայնում և հատուկ կրթական ծրագրերի իրականացում	<ul style="list-style-type: none"> Մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ միջոցառումների իրականացում ԱՌԻՀԱԿԻ և Մարզերում Համալսարանի միջին մասնագիտական կրթական մասնաճյուղերի համագործակցության ընդլայնում, Միջին մասնագիտական ոլորտի կրթական հաստատությունների ուսանողների համար գործնական դասընթացների իրականացում 	2014-2015 ուս. տարի 2015-2016 ուս. տարի	ՀԱԱՀ ռեկտորատ ԱՀՈԻԱԿ-ի տնօրեն	ՀԱԱՀ ԳԽ	Մասնագիտական կողմնորոշման իրականացում, Համալսարանի միջին մասնագիտական հաստատությունների, ինչպես նաև համագործակցող այլ միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների մոտ գործնա-

Ռազմավարական նպատակը	Ռազմավարական խնդիրները	Անհրաժեշտ գործողություններ/միջոցառումներ, քայլեր	Իրականացման ժամանակահատված	Պատասխանատու (նշել պաշտոնը և ա. ազգանունը)	Պահանջվող ռեսուրսներ (մարդկային, նյութական, ֆինանսական)	Վերջնարդյունք (ներ) և դրանց ձեռքբերման ցուցիչներ
						կան հմտությունների ձևավորում,
Կենտրոնի միջազգային կապերի ստեղծում եվրոպական համալսարանների նմանատիպ կառույցների հետ	Միջազգային փորձի հիման վրա գյուղատնտեսական հումքի վերամշակման ու պահպանման նոր տեխնոլոգիաների ուսուցման, կրթության և խորհրդատվության համապարփակ համակարգի ստեղծում	<ul style="list-style-type: none"> Եվրոպական համալսարանների նմանատիպ կառույցների փորձի ուսումնասիրում- բենչմարքինգ, Համատեղ ծրագրերի և իրականացում 	2014-2015 ուս. տարի	ԱՀՈՒԱԿ-ի տնօրեն ՀԱԱՀ ՏՏ և ԻԾ կենտրոն Վ. Մելքոնյան	ԱՀՈՒԱԿ-ի աշխատակազմ, ՀԱԱՀ ՏՏ և ԻԾ կենտրոն	Գյուղատնտեսական հումքի վերամշակման ու պահպանման նոր տեխնոլոգիաների ուսուցման ներդրում և կիրառում, Միջազգային չափանիշներին համապատասխան կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցում